ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո ւ Մ

29 01 2
«------» ---------- 2014թ. Թիվ ----------

ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածով, „Տեղական ինքնակառավարման մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. թիվ 286 որոշմամբ հաստատված կարգով, ընդառաջելով Արմեն Թադևոսյանի /դիմում թիվ Թ-1609, 16.12.2013թ./, Գաբրիել Պողոսյանի / դիմում թիվ Գ-019, 20.01.2014թ./ խնդրանքներին .

Քաղաքային համայնքի ավագանին Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Արտաշատի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող ներքոհիշյալ հողամասերը քանի որ հնարավոր չեն օտարելու որպես առանձին գույքային միավորներ, թույլատրել լրացուցիչ ողղակի վաճառքի կարգով, գործունեությունն ընդլայնելու նպատակով օտարելու Օգոստոսի 23 փողոցի թիվ 50 ա հասցեում գտնվող Արմեն Թադևոսյանին շինության ճակատային մասից 7,4 քմ և 30,6 քմ, և հետևի կողային հատվածից 38,5 քմ ընդհանուր 76,5 քմ մակերեսով, Մյասնիկյան փողոցից դեպի Դալար տանող ճանապարհի թիվ 5/1 հասցեում գտնվող Գաբրիել Պողոսյանին պատկանող շինությանը կից ՝ 192,2 քմ մակերեսով:
2. Հողամասերի ուղղակի վաճառքի կարգով օտարման գները հաշվարկել նրանց կադաստրային արժեքների 100 %-ի չափով:

Բենիամինյան Կարեն	Գալստյան Արթուր
Դերմոյան Արման	Կիրակոսյան Գրիգոր
Հայրապետյան Ռուզան	Հովհաննիսյան Կարեն
Մնացականյան Հարություն	Պողոսյան Գաբրիել
Վարդազարյան Վաչագան	Վարդանյան Դավիթ

ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Գ.ԱՍՐՅԱՆ